ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.4/16794-2021

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ավետիսյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի (Պ-918-31.03.2021-ԳԿ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2021 թվականի ապրիլի 30-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 454 - Ա որոշումը:



ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Կատարող՝ Զ. Դավեյան

Հեռ. 515685

«ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Պ-918-31.03.2021-ԳԿ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

1. «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ.

Նախագծով առաջարկվող կարգավորման կապակցությամբ հարկ է անդրադառնալ օրենքի գործող կարգավորմանը: Մասնավորապես, «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հուշարձաններ ներառող տարածքներում շինարարական, գյուղատնտեսական և այլ կարգի աշխատանքների համար հողի հատկացումները, կառուցապատման, ինժեներատրանսպորտային հաղորդակցության ուղիների նախագծերը սահմանված կարգով համաձայնեցվում են լիազորված մարմնի հետ:

Եթե նշված աշխատանքները կարող են վտանգել այդ տարածքներում գտնվող հուշարձանների պահպանությունն ու անվթարությունը, նախապես, աշխատանքների պատվիրատուի միջոցներով իրագործվում են հուշարձանների պահպանությունն ու անվթարությունն ապահովող միջոցառումներ՝ հետախուզություն, պեղումներ, վերականգնման աշխատանքներ, բացառիկ դեպքերում՝ տեղափոխում և լիազորված մարմնի կողմից առաջարկվող այլ աշխատանքներ:

Հիշյալ օրենքի գործող կարգավորման վերլուծությունից պարզ է դառնում, որ հուշարձաններ ներառող տարածքներում շինարարական, գյուղատնտեսական և այլ կարգի աշխատանքների համար հողի հատկացումները, կառուցապատման, ինժեներատրանսպորտային հաղորդակցության ուղիների նախագծերը սահմանված կարգով համաձայնեցվում են լիազորված մարմնի հետ, իսկ եթե նշված աշխատանքները

կարող են վտանգել այդ տարածքներում գտնվող հուշարձանների պահպանությունն ու անվթարությունը, ապա **բացառիկ դեպքերում է** նախատեսվում հուշարձանի տեղափոխում:

Օրենքի տրամաբանությունից երևում է, որ կարգավորման նպատակը հուշարձանի պահպանության և անվթարության ապահովումն է, մինչդեռ նախագծով ներկայացված կարգավորման համաձայն աշխատանքներ իրականացնողն իրավունք ունի ընտրելու նշված առաջարկություններից որևէ մեկը:

Անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նշված առաջարկներին, մասնավորապես, աշխատանքներ իրականացնողը կարող է ընդունել առաջին առաջարկը, համաձայն որի՝ տեղափոխել հուշարձանը, եթե դա հնարավոր է, մինչդեռ գործող կարգավորմամբ դա թույլատրվում է **միայն բառացիկ դեպքերում**: Այսինքն՝ աշխատանքներ իրականացնողը պետք է հիմնավորի, որ չկա այլ տարբերակ, քան հուշարձանի տեղափոխումը, իսկ նախագծով նախատեսված կարգավորման արդյունքում յուրաքանչյուր դեպքում, երբ հնարավոր է տեղափոխել՝ աշխատանքներ իրականացնողին թույլատրվում է տեղափոխել հուշարձանները: Նման պարագայում վերջինիս կողմից կարող են ցուցաբերվել կամայա-կանության դրսևորման դեպքեր: Այս կապակցությամբ, անհրաժեշտ է նկատի ունենալ նույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող հուշարձանները գտնվում են պետության պահպանության ներքո: Նշված կարգավորման արդյունքում հուշարձանների պահպանությունը դուրս կգա պետության վերահսկողությունից:

Նախագծի 2-րդ առաջարկը, որը նախատեսում է «ձեռք բերել վերջինիս պատկանող հողը, ինչպես նաև փոխհատուցել պատճառված վնասը (բաց թողնված օգուտը).» հստակեցման կարիք ունի, քանի որ պարզ չէ, թե ինչ պատճառված վնասի փոխհատուցման (բաց թողնված օգուտի) մասին է խոսքը: Բացի դրանից, ինչ վերաբերում է նույն կետով հողը ձեռք բերելուն, ապա անհրաժեշտ է նկատի ունենալ նույն օրենքի 35-րդ հոդվածի երկրորդ պարբերությունը, համաձայն որի՝ պետական պատմամշակութային արգելոցները, դրանց մաս կազմող հուշարձանները, կառույցները և հողատարածքները չեն տարանջատվում և օտարվում:

Նախագծերի 3-րդ և 4-րդ առաջարկների առանձին նախատեսելը պարզաբանման կարիք ունի՝ նկատի ունենալով, որ 3-րդ առաջարկով ներկայացված աշխատանքները՝ հետախուզություն, պեղումներ, վերականգնման կամ այլ աշխատանքներ գործող

կարգավորման համաձայն հուշարձանների պահպանությունն ու անվթարությունն ապահովող միջոցառումներ են:

Թեև, նախագծով նախատեսվում է առաջարկը չընդունելու հետևանք, այն է՝ շինարարական, գյուղատնտեսական կամ այլ աշխատանքների իրականացման կասեցում, այնուամենայնիվ բաց են մնում աշխատանքների իրականացման համար նախատեսված հողամասերի հետագա կարգավիճակի վերաբերյալ կարգավորումները: Գործող կարգավորմամբ՝ նախապես, աշխատանքների պատվիրատուի միջոցներով իրագործվում են հուշարձանների պահպանությունն ու անվթարությունն ապահովող միջոցառումները: Տվյալ դեպքում, կարգավորված չէ, թե ում միջոցներով են իրականացվելու առաջարկներով նախատեսված գործողությունները:

Միաժամանակ, անհրաժեշտ ենք համարում հայտնել, որ տվյալ դեպքում բացակայում է նախագծով նախատեսված կարգավորման և դրանով ակնկալվող արդյունքի միջև կապը: Մասնավորապես, հիմնավորմամբ, որպես ակնկալվող արդյունք նշվում է՝ պատմամշակութային հուշարձանների գտնվելու վայրերը ձեռք բերած շինարարական, գյուղատնտեսական կամ այլ աշխատանքներ իրականացնողների իրավունքների ապահովում: Այս առումով անհրաժեշտ է պարզաբանել, թե ինչ իրավունք է խախտվում գործող կարգավորմամբ, և ինչպես է այդ իրավունքի ապահովումն իրականացվում սույն նախագծով:

Նշված կարգավորման վերաբերյալ հարկ է նկատի ունենալ, որ նախագծի հիմնավորման համաձայն կասեցումը տեղի է ունենում այն ժամանակ, երբ լիազոր մարմինը դեռ իր համաձայնությունը չի ներկայացրել ներկայացված առաջարկների վերաբերյալ, մինչդեռ, նախագծով կասեցումը վերաբերում է այն դեպքին, երբ աշխատանքներ իրականացնողը չի ընտրում նախատեսված առաջարկություններից որևէ մեկը:

Այս առումով հարկ է նկատի ունենալ, որ թեև նախատեսվում է աշխատանքների իրականացման կասեցման պարտավորություն, սակայն այս դրույթը չի կարող զսպող մեխանիզմ հանդիսանալ աշխատանքներ իրականացնողի համար, քանի որ սահմանված չէ կասեցման ժամկետ և հնարավոր է, որ աշխատանքներ իրականացնողն չձեռնարկի որևէ միջոցառում:

2. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ.

Օրենքի նախագծով առաջարկվում է, պետական գրանցման օբյեկտի հուշարձան լինելու կամ հուշարձանների պահպանական գոտու տարածքում գտնվելու մասին տեղեկությունը ներառել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականում:

Վերոգրյալի վերաբերյալ հայտնում ենք, որ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների զգալի մասի պահպանական գոտիների նախագծերը դեռևս կազմված չեն՝ դրանք կազմելու աշխատանքային (մասնագիտական) ռեսուրսի, տրանսպորտային միջոցների բացակայության և դեպի զգալի թվով հուշարձանների դժվար հասանելիության պատճառով:

Հարկ ենք համարում նշել, որ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանական գոտիների տարածքների վերաբերյալ տվյալները մինչև 2019 թվականը կազմվել են Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշմամբ հաստատված կարգի N 3 ձևի համաձայն՝ կոորդինատային ազիմուտային համակարգով, ինչի պատճառով անցած ժամանակահատվածում կազմված նախագծերի նույնականացումը գործող կադաստրային քարտեզագրական նյութերում առկա տվյալների հետ (կոորդինատների անհամապատասխանության պատճառով) հնարավոր չէ և դրանք չեն կարող հիմք հանդիսանալ կադաստրային քարտեզներում դրանք նշելու համար:

Միայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 5-ի N 1741-Ն որոշմամբ խմբագրված հիշյալ N 3 ձևի հիմքով է սկսվել քարտեզագրման ներկայում գործող համակարգով (WGS-84 համակարգ) հուշարձանների պահպանական գոտիների նախագծերի (ընդամենը՝ 200 նախագիծ) կազմումը, որոնք բավարար քանակ չեն կազմում կադաստրային քարտեզներում նշված հողատեսքերում պատմական և մշակութային հողերի կոորդինատային տվյալներով հուշարձանների պահպանական գոտիների սահմանները նույնականացնելու և դրանց մակերեսների չափերի վերաբերյալ ճշգրիտ տեղեկություն ապահովելու համար:

Այսպիսով կադաստրային քարտեզագրական նյութերում պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների տարածքների մակերեսներին վերաբերող տվյալները հստակեցման կարիք ունեն, իսկ պահպանական գոտիների հողերի մակերեսներին վերաբերող մասը՝ Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդում ընդհանրապես բացակայում է: Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ պահպանական գոտիների մակերեսներին առնչվող տեղեկատվության գույքային

գրանցման վերաբերյալ դրույթներ նշված չեն եղել և այդ ուղղությամբ առ այսօր որևէ գործընթաց չի իրականացվել:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարծում ենք՝ օրենքների նախագծերի փաթեթի ընդունումը նպատակահարմար չէ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N -

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՔԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արայիկ Խզմալյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը (Պ-918-31.03.2021-ԳԿ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Տ. ԱՎԻՆՅԱՆ

Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-918-31.03.2021-ԳԿ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եւ օգտագործման մասին» 1998 թվականի նոյեմբերի 11-ի ՀՕ-261 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 22-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ. «Շինարարական, գյուղատնտեսական կամ այլ աշխատանքներ իրականացնելիս, եթե վտանգ է սպառնում այդ վայրում գտնվող հուշարձանների պահպանությանն ու անվթարությանը եւ եթե տվյալ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականում բացակայում է տեղեկություն հուշարձանների պահպանման գոտու տարածքի կամ պետական գրանցման օբյեկտ հուշարձան լինելու վերաբերյալ, ապա լիազոր մարմինն աշխատանքներ իրականացնողին առաջարկում է՝

1. տեղափոխել հուշարձանը, եթե դա հնարավոր է.

2. ձեռք բերել վերջինիս պատկանող հողը, ինչպես նաեւ փոխհատուցել պատճառված վնասը (բաց թողնված օգուտը).

3. իրականացնել հետախուզություն, պեղումներ, վերականգնման կամ այլ աշխատանքներ.

4. ապահովել հուշարձանների պահպանությունն ու անվթարությունը:»:

Հոդված 2. Օրենքի 22-րդ հոդվածը լրացնել նոր 3-րդ մասով. «Մինչեւ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված առաջարկություններից որեւէ մեկի ընդունումն աշխատանքներ իրականացնողը պարտավոր է կասեցնել շինարարական, գյուղատնտեսական կամ այլ աշխատանքներ իրականացնելը:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-918[1]-31.03.2021-ԳԿ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետու՞թյան պետա՞՞կան սեփականություն համարվող եւ օտարման ոչ ենթակա պատմության եւ մշա՞կույթի անշարժ հուշարձանների մասին» 2003 թվականի ապրիլի 11-ի ՀՕ-531-Ն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը լրացնել նոր՝ «գ)» կետով. «գ) Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների, գիտության եւ մշակույթի զարգացման բնագավառների հաստատությունների վարչական այն շենքերն ու շինությունները, որոնք պետական կամ հայ ժողովրդի մշակութային ինքնության պահպանման ու զարգացման, համաշխարհային քաղաքակրթության մեջ ներդրման համար ճարտարապետական, պատմական, գեղագիտական կամ սոցիալ-մշակութային տեսակետից ունեն նշանակություն:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-918[2]-31.03.2021-ԳԿ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-295 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը լրացնել նոր՝ «գ.» կետով. «գ. պետական գրանցման օբյեկտը հուշարձան լինելու կամ հուշարձանների պահպանական գոտու տարածքում գտնվելու մասին տեղեկությունը ներառում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականում.»:

Հոդված 2. Օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի « պահպանման» բառից հետո լրացնել «, պատմամշակութային հուշարձանների պահպանության» բառերը:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-918[3]-31.03.2021-ԳԿ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 2-ի ՀՕ-185 հողային օրենսգրքի 23-րդ հոդվածի 2-րդ մասում «գործունեություն» բառից հետո լրացնել «, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒ՞ԹՅԱՆ ՊԵՏԱ՞ԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱ՞ԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Նախագծի նպատակն է ապահովել պատմամշակութային հուշարձանների պահպանությունը, ինչպես նաեւ բացառել պատմամշակութային հուշարձանների օտարումը, օրենքն ուժի մեջ մտնելուց հետո:

Նախագծով առաջարկվում է պետական գրանցման օբյեկտը հուշարձան լինելու կամ հուշարձանների պահպանման գոտու տարածքում գտնվելու տեղեկությունը ներառել անշարժ գուքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականում: Ինչպես նաեւ առաջարկում ենք՝ այդպիսիք ներառված չլինելու դեպքում, շինարարական, գյուղատնտեսական կամ այլ աշխատանքներ իրականացնելիս, եթե վտանգ է սպառնում այդ վայրում գտնվող հուշարձանների պահպանությանն ու անվթարությանը, ապա

լիազոր մարմինը պարտավոր է համաձայնություն ձեռք բերել աշխատանքներ իրականացնող անձի հետ նախագծում թվարկված որեւէ պահանջի իրականացման վերաբերյալ, ընդ որում մինչեւ լիազոր մարմնի կողմից ներկայավցված առաջարկության վերաբերյալ համաձայնություն տալը, աշխատանքներն իրականացնող անձը պարտավորր է կասեցնել աշխատանքները:

Ակնկալվող արդյունքը

Հայաստանի Հանրապետությունում կբացառվի պատմամշակութային հուշարձանների գտնվելու վայրերի օտարումը, ինչպես նաեւ կապահովվի այդ վայրերը ձեռք բերած շինարարական, գյուղատնտեսական կամ այլ աշխատանքներ իրականացնողների իրավունքները: